

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Մ. ԱԲԵՂԵԱՆ, «ՆՄՈՒՇՆԵՐ»։ Շուշի, 1888 թ. 8-ճալ 108 եր.
տառ № 12. Թուղթը և տիպը մաքուր, գինը 40 կոպ.:

Հեղինակը երևի կամեցել է հասարակութեանը ծանօթացնել իր բանաստեղծական շնորհքի հետ և ալը պատճառով լուս է ածել ալը ոտանաւոր «Նմուշները»։ Ոտանաւորները մի քանիսի նիւթը հին եկեղեցական աւանդութիւններից է և ամենաալլանդակ կերպով, իբրև թէ «ժողովրդականացրած»։ Ընթերցողի վերայ ալը՝ բանաստեղծական ոգուց բոլորովին զուրկ՝ ոտանաւորները պնդալի տպաւորութիւն են թողնում, որ կարծես հեղինակը զօռով իր մտքից հանել է բառեր և կուտակել նոցա միմեանց վերայ, միայն պահպանելով չափը։ Չափի համար նա զոհում է ամեն բան և թոյլ է տալիս, օրինակ, ալլալիս բռնութիւններ լեզուի վերայ. «լսում'ի» (փոխանակ լսում էի), «հիմ'» (փոխանակ հիմա), «ահա'չնտեղ» (փոխանակ ահա աչնտեղ)։ Խրթին բառերի կողքին չանկարծ ամենաուամկական բառեր և ոճեր. օրինակ, «բրմուտ, խիչտ, դանդաչումն, թօն, հիւլ, մլար, ժխոր, նենգժեռ» և ալլն, և դոցա կողքին՝ «կպնում, հրէն, զարդանդում, դարա, զաղում» և ալլն։ Պ. Աբեղեանը նորոգում է էլի մի անհամ անհարազատութիւն մեր լեզուի մէջ. «նէ, ներա» իգ. սեռի համար, փոխանակ «նա, նորա»։ Առհասարակ լեզուն շատ անհարթ և անախորժ է։

Ճաշակ տալու համար ընթերցողին հեղինակի ինքնուրոյն ոտանաւորների մասին, գեղարւեստական-բանաստեղծական կողմից, չառաջ բերենք մի քանի կտորներ.

Սուրբ Վարդանը հեծաւ իւր ձին,
Չպնեց հայոց գիւղ ու քաղաք,
«Ով սէր ունի լուս-Հաւատքին,
Թո՛ղ գալ, ասաց, նա իմ քամակ»։ (եր. 27)

Ահա և մի սիրահարական բանաստեղծութիւնից մի նկարչական կտոր (եր. 81).

Անդադրում գետակն է ալլք
Միայն վարելով մնչում,

Եւ քամին, սիրուն իմ Ալիկ,
Մէկ-մէկ հանդարտուկ շնչում:

Բերենք մի կտոր էլ, ուր կը տեսնէք ինչ բանաստեղծական համեմատութիւն է անում հեղինակը (Եր. 90):

Ա'խ, անցնաւ, կորաւ, իմ ոսկի երազ,
Սրախ մէջ մնաց միտն մռայլ մութ,
Ինչպէս վերջավառ ժպտոն հեղանազ
Շուտով մթնեցնում է արևամուտ...

Պ. Արեղեանը արեւ է մի քանի թարգմանութիւններ գերմաներէնից, ֆրանսերէնից և ռուսերէնից: Թարգմանիչը չէ ասում թէ գերմանական բանաստեղծութիւնները արդեօք թարգմանել է բնագիրներէից, թէ ռուսական թարգմանութիւններէից: Առհասարակ բոլոր «Նմուշներ»-ի թարգմանութիւնները անդոն են և չեն լալոնում բնագիրների ոճն ու ոգին: Հասկացողութիւն տալու համար ընթերցողին այդ թարգմանութիւնների մասին, պտաջ բերենք Գեօթէի Erlkönig-ի թարգմանութիւնը՝ «Մէրու-Շահապետ» (Եր. 77): Համեմատելու համար բնագրի հետ, մի քանի կտորներ բերենք և կը տեսնէք՝ որքան թարգմանութիւնը հետու է բնագրից թէ բառերի և թէ ընդհանուր ոճի ու ոգու կողմից: Ահա օրինակներ զատ-զատ տուներից:

Wer reitet so spät durch Nacht und Wind...

Ան ո՞վ արշաւում գիշերը ցրտին...

Mein Sohn, was birgst du so bang dein Gesicht

Որդի, ինչ ես կուչ եկել՝ ինձ կաճում:

Der Erlkönig mit Kron und Schweif.

Մէրու-Շահապետ, ագին, հրէն, երկանցն:

In dürren Blättern säuselt der Wind.

Ան քամին խշշաց հանեց սոսափուն:

Erlkönig hat mir ein Leid gethan.

Մէրու-Շահապետ, մէջքս, կտարեց. և այլն:

Այդ ալլանդակութիւն է և ոչ բանաստեղծական թարգմանութիւն: Աւելի լաւ կ'անէր պ. Արեղեանը, եթէ այդ «Նմուշները» պահէր իր մօտ անտիպ՝ միայն իբրև «պատանեկութեան ժամերից վիշտակ»:

Լ. Ս.